էջմիածնում։ Թէեւ մի կողմից Վաղարշապատը եւ շրջակայքի հայ գիւղական աշխարհը, իրենց ներշնչող ազդեցութիւնն են թողել երիտասարդ բանաստեղծի քնարի վրայ, ներշնչել են նրան ժողովրդական եւ հայրենի մոտիւներ, բայց, միւս կողմից էլ սակայն, վանքի մթնոլորտը մի զգալի չափով մարել է նրա մէջ բանաստեղծական կրակը, շեղել է նրան իր կոչումից։ Եւ դա հասկանալի է. վանքի շրջապատը, վանականների հասարակութիւնը այն մթնոլորտը չեն, ուր ծաղկիլ եւ փթթիլ կարող է բանաստեղծութեան ծաղիկը։

Եւ իսկապէս. մինչ Այրարատեան դաշտը, Մասիսներն ու Արագածը, մայր Արաքսն ու Քասախը մի կողմից, իսկ միւս կողմից էլ Վաղարշապատը եւ Օշականը, Աշտարակն ու Արագածոտնի գիւղերը եւ առհասարակ հայ Միջնաշխարհը իր ներկայով ու անցեալով, իր բնութեամբ եւ եռուն կեանքով ամենաազնիւ, ամենաանկեղծ ներշնչումների մի-մի անապակ աղբիւր են հանդիսացել մեր բանաստեղծի համար, միւս կողմից, ընդհակառակը, էջմիածնական սաղրանքները, ամէն մի կենդանի ոգեւորութիւն եւ ներշնչում խափանող վանական մթնոլորտը, նեղ ու անհրապոյր շրջապատը, այլ եւ առօրեայ մանր ու գծուծ հաշիւները, ընտանեկան եւ ընկերային անվերջ հոգերը կապանք են դրել բանաստեղծի երեւակայութեան վրայ, պաղեցրել են նրա եռանդը, մարել ոգեւորութիւնը։ Դրա հետ միասին՝ նոյն այդ վանական մթնոլորտը իւրատեսակ «ներշնչումներ» է պարտադրել բանաստեղծին, դարձնելով նրան մի տեսակ վանական-արքունի ներբողագիր։

Ո՛վ ծանօթ է Յովհաննիսեանի անհատական կեանքի, ո՛վ ի մօտոյ դիտել է դայն էջմիածնում ու հետեւել միեւնոյն ժամանակ նրա այդ օրերի ստեղծագործութեան, նա նկատած կը լինի նաեւ այն, որ այս վերջինը իսկապէս որ մի զգալի չափով արգասիք է այդ ազդեցութեանց։ Ճեմարանի երբեմնի սաները, Յովհաննիսեանի աշակերտները կը յիշեն անշուշտ, որ նման ազդեցութիւնների տակ են գտնուել, երբեմն մինչեւ իսկ ապսպրուել, նրա՝ այս կամ եկեղեցական տօնին, այս կամ այն անձին նուիրուած, այս կամ այն առթիւ գրուած ոտանաւորներից շատերը։ Եւ դրանք նախապէս լոյս են տեսել «Արարատ» ամսագրում։ Բաղաքը, հասարակական մեծ կենդրոնները շատ անընչչան չափերով են ազդել բանաստեղծի վրայ, նրանք արտացոլուած չեն Յովհաննիսեանի գրականութեան մէջ։

Հայ բանաստեղծներից՝ Յովհաննիսեանի վրայ ամենից շատ ազդել է իր ուսուցիչ Սրմբատ Շահազիզը։ Ռաֆայէլ Պատկանեանին եւս Յովհաննիսեանի գրական ուսուցիչների շարքը դասելու է։ Այդ այդպէս լինելով հանդերձ, Յովհաննիսեան շատ շուտ գծեց իր սեփական գրական ուղին, որ հիմնովին տարբեր էր իր նախորդների ուղիից։ Ու հէնց դրանով էլ նա իր տեղը շահեց հայ գրականութեան պատմութեան մէջ։ Այդ մենք կը տեսնենք դեռ։

Ինչ վերաբերում է ռուս ու եւրոպական ազդեցութիւններին, դրանց շարքում յիշելու է նախ եւ առաջ ռուս դասական բանաստեղծներ Պուշկինին եւ Լերմոնտովին, որոնք մեծապէս ազդել են առհասարակ արեւելահայ բանաստեղծներից շատ շատերի եւ մանաւանդ Յովհաննիսեանի եւ Թումանեանի վրայ։ Յովհաննիսեան խորապէս ազդուել է նաեւ 80-ական թուականների ռուս քնարերգակ-բանաստեղծ Նադսոնից, որ մեռաւ երիտասարդ հասակում։ Յովհաննիսեան միշտ էլ, ամէն պատեհ առթիւ, մի առանձին գուրգուրանքով էր յիշում Նադսոնի անունը։

Ինչ վերաբերում է, վերջապէս, եւրոպացի բանաստեղծներին, այդ տեսակէտից նախ եւ առաջ անուանել պէտք է գերմանացի Հայնէին, այլ եւ Շելլէրին ու Գէօթէին։ Անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնն եւս Յովհաննիսեանի գրական ուսուցիչներից մէկը համարելու է։ Ռուս ու եւրոպացի այս բանաստեղծների մի շարք ոտանաւորները Յովհաննիսեան հայացրել է, այն էլ՝ շատ շնորհալի կերպով։ Այդ եւս փոքր արժանիք չէ։

Շեշտել պէտք է առհասարակ, որ Յովհաննիսեան իր ժամանակակից հայ գրողների շարքում ամենից շատ զարգացածներից էր, գրական լայն պատրաստութեան տէր։

3.— ԺԱՄԱՆԱԿԸ

Յովհաննէս Յովհաննիսեանի գործը գնահատելու, նրա տեղը մեր գրականութեան